



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ №-17Լ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՈՐՊԵՍ
ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 205-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Սահմանել Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

2007թ. հոկտեմբերի 16
ք. Երևան

Կ Ա Ր Գ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման ընթացակարգը:

2. Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող յուրաքանչյուր անձ երդում է տալիս անհատապես և այն հաստատում անձնական ստորագրությամբ:

3. Դատական կարգադրիչների ծառայությունում երդում տալիս են՝

ա) Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ պաշտոնի նշանակվող ծառայողը՝ փորձաշրջանից հետո 1 ամսվա ընթացքում.

բ) երդումը տրվում է մեկ անգամ, այն չի կրկնվում հետագայում (ծառայության վայրը փոխելիս, աշխատանքում վերականգնվելիս, կրկին անգամ դատական կարգադրիչների ծառայությունում պաշտոնի նշանակվելիս):

4. Դատական կարգադրիչների ծառայության առանձնացված ստորաբաժանումներում երդում տվողների հետ մինչև երդման արարողության օրը, տարվում է բացատրական աշխատանք, որի ընթացքում պարզաբանվում են երդման նշանակությունը, Դատական կարգադրիչների ծառայության առանձնահատկություններն ու Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով սահմանված երդման տեքստի բովանդակությունը, և հայտարարվում է երդման արարողության օրն ու ժամը:

5. Երդման յուրաքանչյուր արարողության կազմակերպման և անցկացման համար Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում պարտադիր ընդգրկվում են

դատական կարգադրիչների ծառայության տվյալ առանձնացված ստորաբաժանման պետը, համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարը:

6. Հանձնաժողովի նախագահը կարճ ներածական խոսքով հիշեցնում է դատական կարգադրիչների երդման նշանակության, դատարանների հեղինակությունը բարձր պահելու և այն պատվավոր ու պատասխանատու պարտականության մասին, որը դրվում է իրենց գործին հավատարիմ լինելու երդում տված դատական կարգադրիչների վրա: Այնուհետև հայտարարում է երդման արարողությունը սկսելու մասին:

7. Երդման արարողությունը սկսվում է հանդիսավոր պայմաններում: Երդումը տրվում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջև:

8. Դատական կարգադրիչը երդման արարողության ընթացքում պարտադիր կրում է իր ծառայողական համազգեստը:

9. Երդում տվողները հերթականությամբ հրավիրվում են, նրանցից յուրաքանչյուրը բարձրաձայն ընթերցում է օրենքով սահմանված երդման տեքստը և ստորագրում իր ազգանվան դիմաց: Այնուհետև հանձնաժողովի նախագահը շնորհավորում է դատական կարգադրիչին երդում տալու համար, որից հետո հնչեցվում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

10. Դատական կարգադրիչի կողմից ստորագրված երդման ձևաթուղթը (ձևը կցվում է) կցվում է նրա անձնական գործին:

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ԵՐԴՈՒՄ

«ԵՄ՝ /անուն, հայրանուն, ազգանուն/, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՅՆԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝ ԵՐԴՎՈՒՄ ԵՄ ԻՄ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐԸ, ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՎԵՐԱՊԱՀՈՐԵՆ ԵՎ ԲԱՐԵԽԻՂՃ ԿԱՏԱՐԵԼ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐԻՉԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՍ, ԲԱՐՁՐ ՊԱՀԵԼ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:»:

(Երդվողի

ստորագրությունը)

« »----- 200 թ.